

և աէր դարձած են: Ժողովութզը պաշտօնանկ ըրեր է Տեղապահ Հղաման Վ.թ., որ անտառքեր դանուեր է ժողովրդեան կացութեան հանդէլ:

\* \* \*

### ՕՍՄ. ԽՈՐՀՈՒՄԲԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Օսմանեան Փատիշահներուն մայրաքաղաքը տօնի մէջ էր երէկ: Զմեռնամուտի առար ան արեր, յատկապէս Դեկտեմբերի 4-ին համար, — Օսմ. Խորհրդարանի բացման օրը: Գարնան հրապոյըներուին ու հմայքներովը զինու ած, իր արդար, առատ ու բեղմնաւորիչ լոյսին պէս գաղջանուշ ու կազդուրող ջերմութիւն մը կը սփռէր ամէն կողմ, Առօփորի հեշտանքոտ եղերքներէն մինչև Ռուկեղջիւրի կախարդիչ լայնքերը: Ու ժողովուրդը կանուխ արթնած, բոլոր սեռերն ու բոլոր հասակները՝ բնակարանները թողեր, բարերար արեին տակ, բաց ու ազատ օղին մէջ, մրջիւնի եռու զեռումով մը՝ կը գրաւէին բոլոր փողոցները ներապական ու Ասիական կրկին եղերքները մարգկային դլու խներէ ծածկուած, ոգեսրուած էին, կանդ առաւ թրամվայներուն երթևեկը, կառքերը կը խաչածէին զիրար, ամէն ուղղութեամբ արշաւելով և իրենց հետ թռցնելով մեծ մասամբ հետաքրքիր ժողովուրդի մը գաւոկները:

Օսմ. Խորհրդարանի բացման օրն էր, գեկտեմբերի 4-ը խորհրդաւոր թուանշան, կարծես թէ ազգերուն ազատագրութեան թուականները աստ աստղանշելու համար հնարուած ըլլար ան, 4-ը: Այսու յաւէտ պատմական օր, երեկուան օրը: Պոլիսը՝ կառնուի, բռնակալութեան Պոլիսը, որ անամօթ միան եղած էր այնքան անմեղօրէն թափուած արիւնի հեղեղին: Հին Պոլիսը կառնուի, ահա հարիւր ըերնի թնդանօթները կորոտան ու կաւետեն բռնակալութեան հին շէնքին մլու զումը, որուն աւերակներուն վրայ կը բարձրանայ նոր, նոր կայսրութիւնը:

Մայրաքաղաքին բոլոր թաղերուն մէջ, բոլոր բնակարանները, բոլոր հանքային հաստատութիւնները, Խոճիթներէն մինչև ապարանքները, գրոշազարդուած են, պատուհաններէն, պատշղամներէն, տանիքներէն, չնորհալի, երջանիկ ու ցնծութենէ արքշիու աչքեր մէկ ակնարկի վերածուած, կը յառին հօն, ուրկէ պիտի անցնի Սուլթանը, Սահմանագրական Սուլթանը:

Կայսրը կէսօրին Երլարզի Պալատէն վեց ձիով կառք մը նստաւ, և Տօլմա-Պաղչէի, Կիւմիշ Սուլթանի, Այաս-Մաշայի, Բերայի, Աղապ-Գալիուի, Ունդավանի կամուրջին, Զէյրէտի, Վէ-

ֆայի, նէհղատէ պաշրի, Պայտագիտի, Տիվան Խօլուի ճամբով հասաւ Խորհրդարան։ Կայսը հագած էր եր պաշտօնական համագենութը։

«Բիւզ.»

### ՀԱՅ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆՔ

Չորս հայ ծերակուտական պիտի ըլլայ՝ Աքրահամ փաշա Երամեան, Գարքելլ էֆ. Նորատունկեան, Յովհաննէս փաշա Սադրդ և Պելկրատի դեսպան Ազարեան Էֆէնտի; Օսմ. Սահմանագրական մարմնին պատրաստած ծերակուտականներու ցանկը Ո. Պատրիարքը Վարչապետին ներկայացուցեր է, սակայն ան ըսեր է թէ ուշ է և ամէն ինչ լրնցած է։

\* \* \*

### ՀԱՅՈՅ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Օսմաննեան երեսփոխանութիւնն իր օրակարգին մէջ ունի նաև քրիստոնէից զինուորագրութեան խնդիրը, որուն համար նոր կանոնագրի ծրագրին պատրաստութեան ձեռնարկուած է։ Այս նպատակաւ գատական նախարարութիւնն հարցում ուղղած է Պատրիարքարան թէ ո՞ր կարգի եկեղեցականներ կրնան կամ արտօնեալ են գանուելու բանակներու մէջ, անշուշտ ոչ իբր զինուոր, այլ երբեւ աղօթասաց, ինչպէս կան Թուրք իմամներ բանակներու մէջ։ Այս գիրը բաւական օրերէ ի վեր հասած ըլլալով Պատրիարքարան, տակաւին ո՛ւ է խորհրդակցութիւն չեղաւ այդ միջոցին, որովհետեւ Օսմաննեան երեսփոխանութեան արամագրութիւնն յաշտնի չէ գեռ քրիստոնէից զինուորագրութեան նկատմամբ։ Խնդիրը թերեւս Ազգային երեսփ. Ֆողովոյ նկատողութեան յանձնուի, ըայց, ինչպէս յայտնի է, Ազատութեան հռչակուելէն ի վեր թէ անհատական ճառերու մէջ և թէ պաշտօնական յայտարարութիւններու մէջ քաղձանք յայտնուեցաւ որ Հայերն ալ մասնակցին երկրին պաշտպանութեան, պայմանաւ, որ քրիստոնեաններն ալ ունենան իրենց հոգեսոր կաղմակերպութեան յատուկ վիճակը։ Ինչպէս կերեսի, Պետութիւնն ընդունած է այդ սկզբունքը, և այդ հիման վրայ զինուորագրութեան կանոնագրին մէջ պէտք եղած բարեփոխութիւնն ընելու համար հարցում ուղղած է Պատրիարքարան։